<<ԱՐՄԵՆՊՐԵՍ>> ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԱՊ-ԳՀ ԱՊՁԲ-07/18-1

«___» _____ 20 թ.

ք. Երևան

<<Արմենպրես>> ՓԲԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Ա.Անանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Օպտշին> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մակարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցել ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականուն, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարումը թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետկապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 265056 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդորում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե

արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի

լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված իրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Արմենպրես>> ՓԲԸ	<<Օպտշին>> ՍՊԸ
ք.Երևան, Սարյան 22	ք.Երևան, Երեբունի փողոց 26, 15 տուն
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ	<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220553330048000	Հ/Հ 220098531159000
ՀՎՀՀ 01506041	ՀՎՀՀ 00474635
----------Ա.ԱՆԱՆՅԱՆ	----------Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված N 1
« » 2018թ. Կնքված
ԱՊ-ԳՀԱՊՁԲ-07/18-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի									Մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համար	Նոմենկլատուրայի նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը ապրանքային նշան	արտադրողը և ծագման երկիր	տեխնիկական բնութագիր	չ/մ	միավորի գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	39241200/1	Մկրատ գրասենյակային Maped	Maped/Ֆրանսիա	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ:	հատ	978	3912	4	Սարյան 22	2	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										2	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
2	30192121/1	Գրիչ գնդիկավոր (հասարակ) Silke	Silke/Չինաստան	Գնդիկավոր 0.5մմ ծայրով, տարբեր գույների միջուկներով:	հատ	49.6	7440	150	Սարյան 22	75	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										75	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
3	30141200/1	հաշվեսարք գրասենյակային Kenko/cash	Kenko/cash /Չինաստան	հաշվեսարք սեղանի էլեկտրոնային, արևային սնուցմամբ, 12թվով, 120 քայլ հիշողությամբ, պլաստմասե կոճակներով, առնվազն 18սմX13սմ չափի	հատ	3000	12000	4	Սարյան 22	2	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										2	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
4	39292500/1	Քանոն 30սմ Maped	Maped/Ֆրանսիա	Ուղիղ քանոն՝ գծաբաժանումներով, առավելագույն երկարությունը 30 սմ, պլաստմասե:	հատ	150	1200	8	Սարյան 22	4	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										4	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
5	30197234/2	Թղթապանակ կոշտ կազմով	Berlingo/Ռուսաստան	Թղթապանակ-ռեգիստր երկօղականի, A4 ֆորմատի, հաստությունը 4 սմ, սև:	հատ	774	30960	40	Սարյան 22	20	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/

		/Ռեգիստր փոքր/ Berlingo								20	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
6	30192125/1	մարկեր գրատախտակին գրելու համար Flamingo	Flamingo/Բրազիլիա	Մարկեր մագնիսական գրատախտակին գրելու համար, գույնը սև	հատ	500	7500	15	Սարյան 22	8	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										7	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
7	30197322/1	Կարիչ 20-50 թերթի համար Deli	Deli/Հնդկաստան	Գրասենյակային կարիչ 20-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	1296	6480	5	Սարյան 22	3	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										2	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
8	30197234/1	Թղթապանակ կոշտ կազմով /Ռեգիստր մեծ/ Berlingo	Berlingo/Ռուսաստան	Թղթապանակ-ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի, ներսի մակերեսը լամինապատված, հաստությունը 8 սմ, սև	հատ	900	18000	20	Սարյան 22	10	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										10	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
9	30192160/1	Շտրիխ Space	Space/Չինաստան	Ուղղիչ վրձնինով 20մլ սպիտակ հեղուկ	հատ	248.57	3480	14	Սարյան 22	7	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										7	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
11	30192710/2	Սոսնձամատիտ գրասենյակային չոր Space	Space/Չինաստան	Սոսինձ -մատիտ, չոր, 36 գր:	հատ	198	3960	20	Սարյան 22	10	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										10	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
12	30192100/1	Ռետին հասարակ Space	Space/Չինաստան	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	հատ	100	1500	15	Սարյան 22	8	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										7	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
13	30197321/1	Կարիչ մինչև 20 թերթի համար Deli	Deli/ Հնդկաստան	Գրասենյակային կարիչ մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	990	7920	8	Սարյան 22	4	I կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										4	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը

14	30192137/1	Մատիտ գրաֆիտե միջուկով հասարակ Space	Space/Չինաստան	Մատիտ սև գրաֆիտե համապատասխան կարծրությամբ	հատ	48	1920	40	Սարյան 22	20	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										20	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
15	30192710/1	սոսնձամատիտ հեղուկ Libra	Libra/Հնդկաստան	Սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ) 55 գ. գանգվածով, պլաստմասսյե տարայով, թուղթ սոսնձելու համար:	հատ	198	792	4	Սարյան 22	2	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										2	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
16	30197122/1	կոճգամ պլաս-տմասե գլխիկով Flamingo	Flamingo/Բրազիլիա	կոճգամ մետաղական, պլաստմասե գլխիկով, գունավոր, տարբեր գույների	տուփ	199.2	996	5	Սարյան 22	3	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										3	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
17	39292120/2	գրատախտակի մաքրիչ /հեղուկ/ Space	Space/Չինաստան	Գրատախտակի մաքրման հեղուկ,ոչ տոքսիկ,չի պարունակում քիմիական տարրեր, 100 ml	հատ	1200	3600	3	Սարյան 22	2	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										1	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
18	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր փոքր Deli	Deli/Հնդկաստան	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, տուփի մեջ 100 հատ, N10 կարիչներին համապատասխան	տուփ	99.6	996	10	Սարյան 22	5	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										5	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
19	30192210/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն լայն Navarro	Navarro/Ուկրաինա	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100մ	հատ	499.76	8496	17	Սարյան 22	8	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										9	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
20	30192220/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն նեղ Navaro	Navarro/Ուկրաինա	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ	հատ	100	3000	30	Սարյան 22	15	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										15	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
21	30192128/1	Գրիչ գելային Berlingo	Berlingo/Ռուսաստան	Գրիչ, 0.5մմ ծայրով, տարբեր գույների, գելային:	հատ	250	7500	30	Սարյան 22	15	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										15	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը

22	39263410/1	Ամրակ մետաղյա փոքր (Սկրեպ) Centrum	Centrum/Լատվիա	Փոքր, գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ:	տուփ	120	1800	15	Սարյան 22	8	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										7	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
23	39241140/1	Դանակ գրասենյակային մետաղյա լայն Maped	Maped/Ֆրանսիա	դանակ գրասենյակային, Շեղբի լայնությունը 18մմ պատյանը պլաստիկ՝ ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով, ծայրոցը մետաղական	հատ	549.6	5496	10	Սարյան 22	5	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										5	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
24	30197233/1	Թղթապանակ թելով թղթյա	Դեկոր հատ/Հայաստան	Արագակար կավճած ստվարաթղթից, թելերով կապվող A4 /210x297/մմ ձևաչափի թերթերի համար	հատ	99.9	3996	40	Սարյան 22	20	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										20	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
25	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր միջին Centrum	Centrum/Լատվիա	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր, տուփի մեջ 100 հատ, N26 կարիչներին համապատասխան:	տուփ	150	4500	30	Սարյան 22	15	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										15	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
26	30197231/1	Ֆայլ Impuls	Impuls/Հնդկաստան	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, 50 միկրոն, արագակալներին ամրացնելու հնարավորություն:	հատ	999.6	9996	10	Սարյան 22	5	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										5	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
28	30197232/1	Արագակար մետաղական ամրակով	Դեկոր հատ/Հայաստան	Արագակար կավճած ստվարաթղթից, թելերով կապվող A4 /210x297/մմ ձևաչափի թերթերի համար մետաղական ամրակով	հատ	99.96	9996	100	Սարյան 22	50	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										50	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
29	39241300/1	գրասենյակային դանակի միջուկներ լայն Maped	Maped/Ֆրանսիա	Գրասենյակային դանակի փոխ. բերան, 10 հատ 18մմ	հատ	349.85	4548	13	Սարյան 22	7	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										6	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
30	30192930/1	ուղղիչ գրիչ Space	Space/Չինաստան	ուղղիչ գրիչ, ծայրը գնդիկավոր, սպիտակ գույնի թանաքով	հատ	300	2400	8	Սարյան 22	4	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										4	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը

31	30192125/2	Մարկեր Flamingo	Մարկեր Flamingo	/գծանշիչ, սովորական/Մարկերներ տեքստային, տարբեր գույնի, նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար	հատ	300	7500	25	Սարյան 22	13	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										12	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
32	30199430/1	Նշումների թուղթ տրցակով Libra	Libra/Չին աստան	թուղթ տրցակով, գունավոր կամ սպիտակ, չափերը 9x9x9սմ, 100 թերթ t	հատ	120	1200	10	Սարյան 22	5	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										5	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
35	30199420/1	Նշումների թուղթ սոսնձվածքով Libra	Libra/Չին աստան	Կպչուն, չափսերը 76.2x101.6մմ դեղին, սոսնձվածքը 1.25մմ-ից ոչ պակաս, գունավոր և սպիտակ	հատ	300	12000	40	Սարյան 22	20	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										20	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
38	30197220/1	Թղթի ամրակ Centrum	Centrum/Լատվիա	Թղթերի սեղմակ, 32մմ, արդյունավետ ամրացնում է 90-120 էջ, տուփի մեջ 12հատ	տուփ	400	6000	15	Սարյան 22	8	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										7	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
39	39241142/1	Դանակ գրասենյակային մետաղյա նեղ Maped	Maped/Ֆրանսիա	Շեղբի լայնությունը 9մ	հատ	349.85	4548	13	Սարյան 22	7	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										6	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
40	39241140/2	գրասենյակային դանակի միջուկ նեղ Maped	Maped/Ֆրանսիա	Դանակի փոխ. բերան, 10 հատ 9 մմ	հատ	349.85	4548	13	Սարյան 22	7	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										6	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
41	30197331/1	դակիչ քանոնով Kangaro	Kangaro/Հնդկաստան	Դակիչ քանոնով, 30 էջի համար	հատ	1995	15960	8	Սարյան 22	4	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										4	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
44	22811180/1	Սեղանի գիրք ամենօրյա նշումների համար Space	Space/Չինաստան	Սեղանի տարեկան օրագիրք Ա5 ձևաչափի, կաշվե կազմով օրերով, տառերով, նշումների տեղով	հատ	2490	19920	8	Սարյան 22	4	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										4	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը

45	30192128/2	Գրիչ գելային Berlingo	Berlingo/Ռուսաստան	Գրիչ գելային uniball fine DELUXE կամ համարժեք, սև՝ 5 հատ, կարմիր՝ 5 հատ և կապույտ՝ 20 հատ	հատ	500	15000	30	Սարյան 22	15	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										15	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը
46	39292120/1	գրատախտակի մաքրիչ /ջնջոց/ Space	Space/Չինաստան	Ջնջոց մագնիսական գրատախտակի, "մկնիկի" տեսքով	հատ	799.2	3996	5	Սարյան 22	3	Ի կիսամյակ /մինչև հունիսի 30-ը/
										2	II կիսամյակ /մինչև դեկտեմբերի 15-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Արմենպրես>> ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220553330048000
ՀՎՀՀ 01506041

----------Ա.ԱՆԱՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<Օպտշին>> ՍՊԸ
ք.Երևան, Էրեբունի փողոց 26, 15 տուն
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220098531159000
ՀՎՀՀ 00474635

----------Ա.ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված N 2
20 թ. « » կնքված
ԱՊ-ԳՀԱՊՁԲ-07/18-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	գնումների ինչպես նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	39241200/1	Մկրատ գրասենյակային	-	-	1956	1956	1956	1956	3912	3912	3912	3912	3912	3912	3912
2	30192121/1	Գրիչ գնդիկավոր (հասարակ)	-	-	3720	3720	3720	3720	7440	7440	7440	7440	7440	7440	7440
3	30141200/1	հաշվեսարք գրասենյակային	-	-	6000	6000	6000	6000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
4	39292500/1	Քանոն 30սմ	-	-	600	600	600	600	1200	1200	1200	1200	1200	1200	1200
5	30197234/2	թղթապանակ կոշտ կազմով /Ռեգիստոր փոքր/	-	-	15480	15480	15480	15480	30960	30960	30960	30960	30960	30960	30960
6	30192125/1	մարկեր գրատախտակի	-	-	3750	3750	3750	3750	7500	7500	7500	7500	7500	7500	7500
7	30197322/1	Կարիչ 20-50 թերթի համար	-	-	3240	3240	3240	3240	6480	6480	6480	6480	6480	6480	6480
8	30197234/1	թղթապանակ կոշտ կազմով /Ռեգիստոր մեծ/	-	-	9000	9000	9000	9000	18000	18000	18000	18000	18000	18000	18000

9	30192160/1	Շտրիխ	-	-	1740	1740	1740	1740	3480	3480	3480	3480	3480	3480	3480
11	30192710/2	Սոսնձամատիտ գրասենյակային չոր	-	-	1980	1980	1980	1980	3960	3960	3960	3960	3960	3960	3960
12	30192100/1	Ռետին հասարակ	-	-	750	750	750	750	1500	1500	1500	1500	1500	1500	1500
13	30197321/1	Կարիչ մինչև 20 թերթի համար	-	-	3960	3960	3960	3960	7920	7920	7920	7920	7920	7920	7920
14	30192137/1	Մատիտ գրաֆիտե միջուկով, հասարակ	-	-	960	960	960	960	1920	1920	1920	1920	1920	1920	1920
15	30192710/1	Սոսնձամատիտ հեղուկ	-	-	396	396	396	396	792	792	792	792	792	792	792
16	30197122/1	Կոճգամ պլաստմասե գլխիկով	-	-	498	498	498	498	996	996	996	996	996	996	996
17	39292120/2	Գրատախտակի մաքրիչ /հեղուկ/	-	-	1800	1800	1800	1800	3600	3600	3600	3600	3600	3600	3600
18	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր փոքր	-	-	498	498	498	498	996	996	996	996	996	996	996
19	30192210/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն լայն	-	-	4248	4248	4248	4248	8496	8496	8496	8496	8496	8496	8496
20	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն նեղ	-	-	1500	1500	1500	1500	3000	3000	3000	3000	3000	3000	3000
21	30192128/1	Գրիչ (Գել)	-	-	3750	3750	3750	3750	7500	7500	7500	7500	7500	7500	7500
22	39263410/1	Ամրակ մետաղյա փոքր (Սկրեպ)	-	-	900	900	900	900	1800	1800	1800	1800	1800	1800	1800
23	39241140/1	Դանակ գրասենյակային մետաղյալայն	-	-	2748	2748	2748	2748	5496	5496	5496	5496	5496	5496	5496
24	30197233/1	թղթապանակ թելով թղթյա	-	-	1998	1998	1998	1998	3996	3996	3996	3996	3996	3996	3996
25	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր միջին	-	-	2250	2250	2250	2250	4500	4500	4500	4500	4500	4500	4500
26	30197231/1	Ֆայլ	-	-	4998	4998	4998	4998	9996	9996	9996	9996	9996	9996	9996
28	30197232/1	Արագակար մետաղական ամրակով	-	-	4998	4998	4998	4998	9996	9996	9996	9996	9996	9996	9996
29	39241300/1	գրասենյակային դանակի միջուկներ /լայն/	-	-	2274	2274	2274	2274	4548	4548	4548	4548	4548	4548	4548
30	30192930/1	ուղղիչ գրիչ	-	-	1200	1200	1200	1200	2400	2400	2400	2400	2400	2400	2400
31	30192125/2	Մարկեր	-	-	3750	3750	3750	3750	7500	7500	7500	7500	7500	7500	7500

32	30199430/1	Նշումների թուղթ տրցակով	-	-	600	600	600	600	1200	1200	1200	1200	1200	1200	1200
35	30199420/1	Նշումների թուղթ սոսոնձվածքով	-	-	6000	6000	6000	6000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
38	30197220/1	Թղթի ամրակ	-	-	3000	3000	3000	3000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
39	39241142/1	Դանակ գրասենյակային մետաղյա նեղ	-	-	2274	2274	2274	2274	4548	4548	4548	4548	4548	4548	4548
40	39241140/2	գրասենյակային դանակի միջուկ նեղ	-	-	2274	2274	2274	2274	4548	4548	4548	4548	4548	4548	4548
41	30197331/1	դակիչ քանոնով	-	-	7980	7980	7980	7980	15960	15960	15960	15960	15960	15960	15960
44	22811180/1	Սեղանի գիրք ամենօրյա նշումների համար	-	-	9960	9960	9960	9960	19920	19920	19920	19920	19920	19920	19920
45	30192128/2	Գրիչ գելային	-	-	7500	7500	7500	7500	15000	15000	15000	15000	15000	15000	15000
46	39292120/1	Գրատախտակի մաքրիչ /ջնջոց/	-	-	1998	1998	1998	1998	3996	3996	3996	3996	3996	3996	3996

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Արմենպրես>> ՓԲԸ
ք.Երևան, Սարյան 22
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220553330048000
ՀԿՀՀ 01506041

Ա.ԱՆԱՆՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

<<Օպտշին>> ՍՊԸ
ք.Երևան, Երեբունի փողոց 26, 15 տուն
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 220098531159000
ՀԿՀՀ 00474635

Ամակարյան